Գրոլեստարներ բոլոր յերկրների, միացե՛ք

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐԴԱՆ ՀՍԽՀ Կ. Գ. Կ. ՑԵՎ ԱՌԴԺՈՂԿՈՄԱՏԻ

1935 Թ.
ՊԱՐՏԱԴԻՐ ԿՈՊԱՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ
ՄԱՍԻՆ

ՎՈՐՈՇՈՒՄ ՀՍԽՀ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ
ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

368
Հ-25

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ Հ. Ս. Խ. Հ. ԿԵՆՏ. ԳՈՐԾ. ԿՈՄ.
ՑԵՐԿՎԱՆ
ՀՍԽՀ — CCPA
1934 թ.

Գեր. Հանրապետ. Գրադարան
ՀՍԽՀ — CCPA
Մ. Գ. Գ. Մեսրոպյանի անվան

368
Հ-25
1 MAR 2010
3436
3037

ՀԱՎԵԼՎԱԾ «ԽՈՐ. ՇԻՆ.» ԺՈՒՌՆԱԼԻ

ՎՈՐՈՇՈՒՄ ՀՍԽՀ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

1935 Թ. ՊԱՐՏԱԴԻՐ ԿՈՊԱՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի 1934 թ. հուլիսի 19-ի «Գյուղական վայրերում և քաղաքներում 1935 թ. պարտադիր կոպարային ապահովագրություն անցկացնելու վերաբերյալ որոշման» («Իզվեստիա» 1934 թ. հուլիսի 20-ի № 167) և ԱՍՖԽՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի 1934 թ. օգոստոսի 1 նույնանման որոշման հիման վրա, Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը ՎՈՐՈՇՈՒՄ Է՝

ՀԱՏՎԱԾ I

ԻՆՉՊԻՍԻ ԳՈՒՅՔ ՑԵՎ ԻՆՉՊԻՍԻ ԱՂԵՏՆԵՐԻՑ Ե ԱՊԱՀՈՎԱԳՐՎՈՒՄ

1. Կոլտնտեսություններում՝ (գյուղատնտեսական կոմունաներում, գյուղատնտեսական արտելներում և միատեղ հող մշակող ընկերություններում), նմանապես և տնայնագործական-արհեստագործական սկզբնական կազմակերպություններում, գյուղական վայրերում և հաշմանդամների սկզբնական կազմակերպությունների կոոպերացիայում գյուղական վայրերում ու քաղաքներում պարտադիր կոպարային ապահովագրության յենթակա յեն՝

ա) շենքերը, գյուղատնտեսական և արդյունաբերական ձեռնարկությունները (սարքավորման հետ), ամբողջ ինվենտարը, տրանսպորտի միջոցները, ամբողջ գյուղատնտեսական ու արդյունաբերական արտադրանքը (սերմի, պարենային և ապրանքային), ինչպես և հումքը, պաշարը և նյութերը— կրակից, հեղեղումներից, յերկրաշարժից, փլուզումներից, սողումներից, մրրկից, տարափից, փոթորիկներից, կայծակահարությունից և շոգեկաթսաների պայթումից.

բ) պարնիկների և ջերմոցների շրջանակները կարկտահարության պատճառած վնասներից.

գ) գյուղատնտեսական բուսական մշակույթների ցանքերը և պտղատու ու խաղողի այգիների բերքը— կարկտահարումից, տարափից, փոթորիկներից և կրակից.

09 SEP 2013

43.871

դ) հատուկ և տեխնիկական գյուղատնտեսական բույսերը, այն է՝ բամբակի և ծխախոտի ցանքերը՝ բոլոր տեսակի տարերային աղետներից, վնասատուներից և բույսերի հիվանդություններից։

յե) կտավհատի և կանեփի ցանքերը — յերաշտից։

զ) կարմիր յերեքնուկի սերմանոցների ցանքերը— յերաշտից և ցրտահարությունից։

ը) ծխախոտի ցանքերի լրացուցիչ ապահովագրումը կարկտահարումից — միմիայն բերքի վորակն իջեցնելու դեպքում։

թ) խոշոր յեղջյուրավոր անասունները— վեց ամսական հասակից— անկումից։

ժ) ձիերը, ջորիները, ուղտերն ու ավանակները մեկ տարեկան հասակից, իսկ ցեղական մատղաշ անասունները վեց ամսականից— անկումից։

ի) վոչխարները, այծերն և խոզերն վեց ամսական հասակից— անկումից։

2. Կոլտնտեսականների (վոչ հանրայնացված դույքի վերաբերմամբ), աշխատավոր մենատնտեսների տնտեսությունների, բանվորների, ծառայողների, տնայնագործների, արհեստավորների և մյուս աշխատավորների տնտեսությունների նկատմամբ պարտադիր կոպարային ապահովագրության յենթակա յեն՝

Յերևանում, Լենինականում, Վաղարշապատում, Ղարաքիլիսայում, Դիլիջանում, Նոր-Բայազետում և Գորիսում— չենքերը, տնայնագործական արհեստագործական արհեստանոցները (սարքավորման հետ)— կրակից, հեղեղումներից, յերկրաշարժից, փլուզումներից, մրրիկից, փոթորկից, տարափից, սողումներից, կայծակահարությունից և շոքեկթասյի պայթումից։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՈԼՈՐ ՎԱՅՐԵՐՈՒՄ

ա) գյուղատնտեսական մշակույթների ցանքերը և պտղատու ու խաղողի այգիների բերքը՝ կարկտահարումից, տարափից և փոթորկից։

բ) հատուկ և տեխնիկական մշակույթներն, այն է՝ ծխախոտի և բամբակի ցանքերը— բոլոր տեսակի տարերային աղետներից, վնասատուներից ու բույսերի հիվանդություններից։

գ) կտավատի և կանեփի ցանքսերը —յերաշտից։

դ) կարմիր յերեքնուկի սերմանոցների ցանքերը— յերաշտից և ցրտահարությունից։

յե) ծխախոտի ցանքերի լրացուցիչ ապահովագրումը կարկտահարումից —միմիայն բերքի վորակն իջեցնելու դեպքում։

զ) խոշոր յեղջյուրավոր անասունները— վեց ամսական հասակից— անկումից։

ը) ձիերը, ջորիները, ուղտերն և ավանակները— մեկ տարեկան հասակից— անկումից։

3. Զի ապահովագրվում այն գույքը, վորը պատկանում է անհատական կարգով գյուղատնտեսական հարկ վճարող կուլակային տնտեսություններին, № 3 ցանկով յեկամտահարկ վճարող անաշխատ տարրերի տնտեսություններին, ինչպես նաև այն անձանց, վորոնք ընտրական իրավունքից զրկված են։

ՀԱՏՎԱԾ II

ԻՆՉՊԻՍԻ ԳՈՒՄԱՐՈՎ ԵՆ ՎՃԱՐՎՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՎՆԱՍՆԵՐԸ

ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՅԵՎ ՍԿԶԲՆԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎՆԵՐՈՒՄ

4. Շենքերի, գյուղատնտեսական ու արդյունաբերական ձեռնարկությունների (սարքավորման հետ), ինվենտարի, տրանսպորտի միջոցների, հումքի պաշարի գյուղատնտեսական և արդյունաբերական արտադրանքի և նյութերի վնասները—կրակից և այլ տարերային աղետներից վճարվում են դրանց լրիվ արժեքով, ըստ գույքագրացուցակի։

Կոլտնտեսականների, մենատնտեսների, տնայնագործների արհեստավորների, բանվորների, ծառայողների և այլ աշխատավորների տնտեսություններում՝

Յերևանում, Լենինականում, Վաղարշապատում, Ղարաքիլիսայում, Դիլիջանում, Նոր-Բայազետում և Գորիսում չենքերի, տնայնագործական-արհեստագործական ձեռնարկությունների (սարքավորման հետ)— կրակից և այլ տարերային աղետներից կրած վնասները վճարվում են վնասի լրիվ չափով ըստ ապահովագրական գնահատման։

5. Բուսական մշակույթների ցանքերը կարկտահարությունից, տարափից, փոթորկից, կրակից և գյուղատնտեսական կենդանիներն— անկումից ապահովագրելու դեպքում, ապահովագրական վարձատրություն վճարվում և հետևյալ նորմաներով՝

Ա. ԲՈՒՍԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐԸ ԿԱՐԿՏԱՀԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ, ՏԱՐԱՓԻՑ, ՓՈԹՈՐԿԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԵԼՈՒ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ՝

ԲՈՒՍԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ	Նորմաներ ռուբլիներով յուրաքանչյուր մեկ հեկտարից		
	Կոլտնտեսություններում և սկզբնական կոոպերատիվներում	Կոլտնտեսականների տնտեսություններ	Մենատնտ. տնտեսություններ
ԱՌԱՋԻՆ ԽՈՒՄԲ			
1. Հացահատիկային (ցորեն, գարի, հաճար, յեգիպտացորեն, կորեկ, (բակլային) լոբի, սիսեռ, վոսպ և այլն	80	65	60
2. Արևածաղիկ	175	130	100
3. Ցանովի խոտաբույսեր	175	150	120
4. Սիլոսի մշակույթներ	75	65	60
ՅԵՐԿՐՈՐԴ ԽՈՒՄԲ			
5. Բոստան	500	450	400
6. Բանջարանոց	600	500	450
7. Պտղատու այգիներ	800	625	575
8. Խաղողի այգիներ	1475	975	875
9. Թթենու ծառեր	250	200	200
ՅԵՐՐՈՐԴ ԽՈՒՄԲ			
10. Կարտոֆիլ	200	150	130
11. Արմատապտուղներ	200	150	130
12. Կտավատ	40	35	35
13. Կանեփ	130	110	110
14. Զալթուկ	400	300	300
15. Շաքարի ճակնդեղ	250	200	150
16. Այլ բուսական մշակույթներ	175	150	130
17. Ծխախոտ (լրացուցիչ պատասխանատվություն)	1200	900	900
18. Սածիլներ բոլոր տեսակի	100	—	—

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Գորիսի, Իջևանի, Կոտայքի, Քեշիշքենդի, Շամշադինի, Ղափանի և Ալլահվերդու շրջանների խաղողի այգիների նկատմամբ սահմանվում են հատուկ նորմաներ, այն է՝ կոլեկտիվ տնտեսությունների համար 1000 ռուբլի, կոլտնտեսականների՝ 700 ռ. և մենատնտեսների՝ 650 ռուբլի մեկ հեկտարից։

Բ. ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՄԱՆ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ

ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ	Անասունների ապահովագրական հասակը	Կոլտնտեսություններում և սկզբնական կոոպերատիվներում	Կոլտնտեսականների անտնտեսություն	Մենատնտես անտնտեսություն
	Նորմաները ռուբլիներով մեկ գլուխ անասունի համար			
1. Մատղաշ խոշոր եղջյուրավոր անասուններ	6 ամսականից մինչև 1 տարեկան	75	70	65
2. Մատղաշ խոշոր եղջյուրավոր անասուններ	1 տար. մինչև 2 տար.	85	80	75
3. Կովեր, յուզներ, ցուլեր	2 տարեկան և բարձր	145	140	130
4. Գոմեշներ և մատակներ	2 տարեկան և բարձր	185	180	175
5. Ձիեր, ուղտեր, ջորիներ . . .	1 տար. մինչև 2 տարեկան, իսկ ցեղականը 6 ամսականից	75	70	65
6. Ձիեր, ուղտեր և ջորիներ	2 տարեկան և բարձր	160	150	140
7. Ավանակներ	1 տար. մինչև 2 տար.	30	25	25
8. Ավանակներ	2 տարեկան և բարձր	65	55	55
9. Վոչխարներ և այծեր	6 ամսական և բարձր	50	—	—
10. Խոզեր	6 ամս. և բարձր	75	—	—

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Կոլտնտեսություններում և սկզբնական կոոպերատիվներում ցեղական խոշոր եղջյուրավոր անասունները մեկ տարեկանից բարձր, իսկ ցեղական ձիերը յերկու տարեկանից բարձր անպայման ապահովագրում են լրիվ արժեքով ըստ ապահովագրական գնահատման:

6. Հատուկ և տեխնիկական գյուղատնտեսական բուսական մշակույթների ցանքերի համար, վորոնք ապահովագրվում են բոլոր տեսակի տարերային աղետներից, վնասատուներից, բույսերի հիվանդություններից— ապահովագրական վարձատրություն վճարվում է հետևյալ նորմաներով մեկ հեկտարից ռուբլիներով՝

ԲՈՒՍԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐԻ ՑԱՆՔԵՐԻ ԱՆՈՒՆԸ	Նորմաները ռուբլիներով մեկ հեկտարից	
	Կոլտնտեսություններում և սկզբնական կոոպերատիվներում	Կոլտնտեսականների և մենատնտեսների անտնտեսություններում
Բամբակ	150	120
Դեղին ծխախոտ	1200	900

7. Կտավհատի և կանեփի ցանքերը յերաշտից և կարմիր յերեքնուկի սերմանոցների ցանքերը յերաշտից ու ցրտահարությունից ապահովագրելու դեպքում, ապահովագրական վարձատրություն վճարվում է հետևյալ նորմաներով մեկ հեկտարից ռուբլիներով՝

ԲՈՒՍԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ	Կոլտնտեսություններում և սկզբնական կոոպերատիվներում	Կոլտնտեսականների և մենատնտես անտնտեսություններում
1. Կտավատ յերկարացողու	110	90
2. Կտավատ բազմացողունն	40	35
3. Կանեփ	130	110
4. Կարմիր յերեքնուկի սերմանոցներ	200	170

8. Ապահովագրական այն վնասները, վորոնք տեղի կունենան 1935 թ. հունվարի մեկից մինչև դեկտեմբերի 31-ը վճարվում են այս վորոշման 5,6 և 7 հոդվածներում նշված նորմաներով: Կարմիր յերեքնուկի սերմանոցների ցանքերը յերաշտից և ցրտահարությունից ապահովագրելու վերաբերմամբ, այս վորոշման 7-րդ հոդվածում նշված նորմաները տարածվում են և այն վնասների վրա, վորոնք տեղի կունենան 1934 թվին:

9. Վնասները սահմանված նորմաների լրիվ գումարի չափով հաշվարկվում և վճարվում են յերբ դույքը վոչնչացել է ամբողջովին, իսկ յեթե վնասվել է մասնակի կերպով, ապա վճարվում է այդ գումարի համապատասխան մասը:

Պարտադիր կոոպերային ապահովագրության ապահովագրական վարձատրությունից չի կարելի դանձել վորևե գումար, բացառությամբ կոոպերային ապահովագրության վճարումների և հետևյալի:

10. Պետական մարմինների կողմից չեն հատուցվում այն վնասները, վորոնք տեղի չեն ունեցել կոլեկտիվ, կոոպերատիվ, կոլտնտեսական և մենատնտես անտնտեսությունների մեջքով բացահայտ անտնտեսվարության, հանրային սեփականության պաշտպանության բացակայության, կամ ապահովագրվողի դիտավորյալ գործողությունների, կամ ել հակահրդեհային կանոնները չպահպանելու ու կրակի հետ կոպիտ, անզգուշաբար վարվելու հետևանքով, նմանապես և անասունների չարաչար չահագործման պատճառով:

ՀԱՏՎԱԾ III
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ

11. Կոլտնտեսությունների և կոլտնտեսականների ապահովագրական ծախքերը պակասեցնելու նպատակով, 1935 թվին ապահովագրական վճարումներն իջեցվում են միջին հաշվով 7 տոկոս՝ 1934 թվի ապահովագրական վճարումների համեմատությամբ, և սահմանվում են հետևյալ դրույքները:

Ա. ԿՐԱԿԻՑ ՑԵՎ ԱՅԼ ՏԱՐԵՐԱՅԻՆ ԱՂԵՏՆԵՐԻՑ

ՎԱՅՐԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ	Կոլտնտեսություններում և սկզբնական կոոպերատիվներում		Կոլտնտ. և մենատնտ.
	Շենքերի, արդյունաբերական ձեռնարկությունների, գյուղատնտեսական արտադրանքի հումքի, պաշարի և նյութերի համար	Ինվենտարի և տրանսպորտի միջոցների համար	Շենքերի և արդյունաբերական ձեռնարկությունների համար
	Ապահովագրության յուրաքանչյուր 100 ռուբլուց կոպեկներով		
1. Ցերևանում, Լենինականում, Ն. Բայազետում, Վաղարշապատում, Դիլիջանում, Գորիսում և Ղարաքիլիսայում	30	30	70
2. Հայաստանի մյուս քաղաքներում և գյուղերում	50	30	—

Բ. ԲՈՒՍԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԵՐԸ ԿԱՐԿՏԱՀԱՐՈՒՄԻՑ, ՏԱՐԱՓԻՑ ՑԵՎ ՓՈԹՈՐԿԻՑ

ԲՈՒՍԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐԻ ԱՆՈՒՆԸ	Հայաստանի բոլոր վայրերում					
	Կոլտնտեսությունների համար		Կոլտնտեսականների համար		Մենատնտեսների համար	
	Տեղերը ապահովագրվածից	Դուրս գրումներ մեկ հեկտարից	Տեղերը ապահովագրվածից	Դուրս գրումներ մեկ հեկտարից	Տեղերը ապահովագրվածից	Դուրս գրումներ մեկ հեկտարից
1. Հացահատիկային (ցորեն, գարի, հաճար, ռեդիսպատցորեն, կորեկ), բակլային (լոբի և այլն)	2,4	1—92	2,7	1—76	5,2	3—12
2. Արևածաղիկ	4,0	7—00	4,5	5—85	6,9	6—90
3. Ցանովի խոտաբույսեր	2,4	4—20	2,7	4—05	5,2	6—24
4. Միրոսի մշակություններ	2,4	1—80	2,7	1—76	5,2	3—12
5. Բոստան	4,0	20—00	4,5	20—25	6,9	27—60
6. Բանջարանոց	4,0	24—00	4,5	22—50	6,9	31—05
7. Պտղատու այգիներ	5,0	40—00	5,4	33—75	8,2	47—15
8. Խաղողի այգիներ	5,0	73—75	5,4	52—65	8,2	71—75
9. Թթենու ծառեր	5,0	12—50	5,4	10—80	8,2	16—40
10. Կարտոֆիլ	2,4	4—80	2,7	4—05	5,2	6—76
11. Արմատապտուղներ	2,4	4—80	2,7	4—05	5,2	6—76
12. Կտավատ	4,0	1—60	4,5	1—58	6,9	2—42
13. Կանեփ	4,0	5—20	4,5	4—95	6,9	7—59
14. Զալթուկ	4,0	16—00	4,5	13—50	6,9	20—70
15. Շաքարի ճակնդեղ	2,4	6—00	2,7	5—40	5,2	7—80
16. Այլ բուսական մշակություններ	4,0	7—00	4,5	6—75	6,9	8—97
17. Սածիլներ բոլոր տեսակի	5,0	5—00	—	—	—	—

Գ. ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ԴՐՈՒՑՔՆԵՐՆ ԱՆԿՈՒՄԻՑ

ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ	Կոլեկտիվ և սկզբնական կոոպերատիվ տնտեսութ.		Կոլտնտեսականների տնտեսություններում				Մենատնտեսների տնտեսություններում			
	Հայաստանի բոլոր վայրերում		Ցերևանում Լենինական., Վաղարշապ., Ղարաքլիսա., Դիլիջանում, Ն. Բայազետ., Գորիսում		Հայաստանի մյուս վայրերում		Ցերևանում Լենինական. Վաղարշապ., Ղարաքլիսա., Դիլիջանում. Ն. Բայազետ., Գորիսում		Հայաստանի մյուս վայրերում	
	Տոկոսներ ամբողջական գումարից	Ցենտներ մեկ գրամ դիմաց	Տոկոսներ ամբողջական գումարից	Ցենտներ մեկ գրամ դիմաց	Տոկոսներ ամբողջական գումարից	Ցենտներ մեկ գրամ դիմաց	Տոկոսներ ամբողջական գումարից	Ցենտներ մեկ գրամ դիմաց	Տոկոսներ ամբողջական գումարից	Ցենտներ մեկ գրամ դիմաց
1. Մատղաշ խոշոր յեղջյուրավոր անասուններ 1 տարեկ. մինչև 2 տարեկան	2,35	2—00	4,35	3—48	4,35	3—48	5,70	4—28	5,70	4—28
2. Կովեր, յեզներ, ցուլեր 2 տ. բարձր	2,35	3—41	4,35	6—09	4,35	6—09	5,70	7—41	5,70	7—41
3. Գոմեշներ և մատակն. 2 տ. և բարձր	2,35	4—35	4,35	7—83	4,35	7—83	5,70	9—98	5,70	9—98
4. Ձիեր, ուղտեր, ջորին. 2 տ. և բարձր	4,90	7—84	8,35	12—53	7,60	11—40	10,90	15—26	9,90	13—86
5. Ավանակներ 2 տ. բարձր	4,90	3—19	8,35	4—59	7,60	4—18	10,90	6—00	9,90	5—45
6. Հասարակ վոչխարներ և այծեր 6 ամս. և բարձր	5,35	2—68	—	—	—	—	—	—	—	—
7. Խոզեր 6 ամս. և բարձր	6,25	4—69	—	—	—	—	—	—	—	—

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ—Կարակուլի, գմակավոր վոչխարների համար գրույքը սահմանվում է կոլտնտեսությունների համար 4,30/0, կոլտնտեսականների համար 6,50/0 և մենատնտեսների տնտեսությունների համար 8,50/0 ապահովագրական գումարից։

12. Խոշոր յեղջյուրավոր մատղաշ անասունները վեց ամսականից մինչև մեկ տարեկան և մատղաշ ձիերը, ջորիները, ուղտերն ու ավանակները մեկ տարեկանից (իսկ ցեղական անասունները 6 ամսականից) մինչև յերկու տարեկան հասակն ապահովագրված են համարվում առանց ապահովագրական վճարումներ գանձելու։

13. Ցանքերի ապահովագրական վճարումները հաշվարկվում են յուրաքանչյուր տնտեսության գարնանացան և աշնանացան պլանի համաձայն, վորը սահմանված է համապատասխան տարվա համար, իսկ բազմամյա տունկերի նկատմամբ— հաշվառված տարածության համաձայն։

Այն տարածությունների համար, վորոնք պլանից ավելի յեն ցանված, ապահովագրական վճարումներ չեն սահմանվում, իսկ վնասները հատուցվում են ցանքի փաստացի տարածության համաձայն։

14. Հատուկ և տեխնիկական դյուղատնտեսական բուսական մշակույթների համար սահմանվում են հետևյալ գրույքները (տարիֆները)։

ՍԵԿՏՈՐ	Բոլոր տեսակի տարերային աղետներից				Դեղին ժխտխոտի ցանքերը կարկտահարությունից ապահովագրելու համար	
	Բամբակի համար		Դեղին ժխտխոտի համար			
	Տոկոսներ ամբողջական գումարից	Ցենտներ մեկ հեկտարից	Տոկոսներ ամբողջական գումարից	Ցենտներ մեկ հեկտարից	Տոկոսներ ամբողջական գումարից	Ցենտներ մեկ հեկտարից
1. Կոլտնտեսություններ և սկզբնական կոոպերատիվներ	2,3	3—45	3,4	40—80	2,4	28—80
2. Կոլտնտեսականներ	3,5	4—20	4,6	41—40	2,7	24—30
3. Մենատնտես աշխատավոր տնտեսություններ	4,4	5—28	5,8	52—20	5,2	46—80

15. Հարավային կանեփի ցանքերը բոլոր տեսակի տարերային աղետներից, կտավատի ու կանեփի ցանքերը յերաշտից և կարմիր յերեքնուկի սերմանոցների ցանքերը յերաշտից և ցրտահարությունից ապահովագրելու գծով, ապահովագրական վճարումներ չեն գանձվում։

ՀԱՏՎԱԾ IV

ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԵՆԴԱՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

16. Կենդանաբուծության հետագա զարգացմանը նպաստելու և նրա ապրանքայնությունը բարձրացնելու նպատակով՝ կոլտնտեսություններին և սկզբնական կոոպերատիվներին արվում են հետևյալ արտոնությունները.

ա) աղնվացեղ անասունների ապահովագրության նկատմամբ վճարումից զեղչ է արվում 20 տոկոսի չափով.

բ) ապրանքային ֆերմաներում գտնվող ձիերի, խոշոր յեղջյուրավոր անասունների, խոզերի, վոչխարների և այծերի ապահովագրության նկատմամբ վճարումից զեղչ է արվում 20 տոկոսի չափով. այդ զեղչն արվում է աղնվացեղ անասունների նկատմամբ վորպես առաջին զեղչին հավելյալ.

գ) առաջավոր կոլտնտեսություն-

ը, վորոնք լավագույն ցուցանիշներ ունեն անասունների պահպանման և զարգացման գործում (կոլտնտեսական հոտի ավելացումը մատղաշ սերընդի աճեցման միջոցով, անասունների անկման կրճատումը, դոմերի տաքացումը, անասունների լավ կերակրելն ու խնամելը, դրանց կանոնավոր շահագործելը և այլն) գյուղատնտեսական անասունների համար հաշվարկված ապահովագրական վճարումներից զեղչ է արվում մինչև 25 տոկոսի չափով։

ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱԿԱՀՐԴԵ ՀԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՅԵՎ ՀՐԱԴԻՄԱՑԿՈՒՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

17. Այն կոլտնտեսությունները և սկզբնական կոոպերատիվները, վորոնք ունեն լավ կազմակերպված հակահրդեհային պահպանություն (մարտունակ խումբ ու սարք ու կարգին մեքենաներ և ինվենտար, կրակմարիչներ, կոլտնտեսական գույքի մշտական պահպանում և այլն) ինչպես և հրադիմացկուն շենքեր կառուցող կոլտնտեսություններն և սկզբնական կոոպերատիվները, շենքերի, ձեռնարկությունների և ինվենտարի ապահովագրության վճարումների հաշվարկված գումարից զեղչ են ստանում մինչև 50 տոկոսի չափով։

18. Այս վորոշման 16-րդ հոդ. «դ» կետում և 17-րդ հոդ. նշված զեղչերի չափն առանձին կոլտնտեսությունների և սկզբնական կոոպերատիվների համար սահմանում է շրջանային ապահովագրական հանձնաժողովը։

19. Այն կոլտնտեսությունները, կոլտնտեսականներն և մենատնտես աշխատավոր տնտեսությունները, վորոնք սահմանված կանոնների համաձայն տեղափոխվել են նոր վայրեր, տեղափոխման առաջին տարում ապահովագրական վճարումներից զեղչ են ստանում 50 տոկոսի չափով։

20. Կոլտնտեսության համար հաշվարկված ապահովագրական վճարումներից հանվում է այն գումարի 50 տոկոսը, վորն ընկնում է կոլտնտեսության հետևյալ անդամներին՝

ա) Խորհրդային Միության հերոսներին, ԽՍՀՄ շքանշաններով կամ հեղափոխական պատվավոր զենքով պարգևատրված անձանց և աշխատանքի հերոսներին։

բ) ժամկետավոր «անընդհատ կամ դերագետիկ ծառայության կադրային, շարքային և կրտսեր հրամկազմի զինվորականներին, հաշվելով նաև 1934 թ. աշնանը զինակոչվածներին։

գ) միջին, ավագ և բարձրագույն կադրային ու պահեստի (ռեզերվի) վարչական զինվորականներին։

դ) կրտսեր հրամկազմի այն զինվորականներին, վորոնք յերկարատև արձակուրդից վերահաշված են յերկրային մասերի փոփոխական կազմը։

յե) Նախկին կարմիր գվարդիականներին և կարմիր պարտիզաններին։

զ) Բանվորա-գյուղացիական միլիցիայի ոպերատիվ շարքային և վարչա-տնտեսական կազմին պատկանող անձանց։ Պետական հատուկ նշանակություն ունեցող ձեռնարկությունների և կառուցվածքների ռազմականացված պահպանության և ռազմականացված հրշեջ պահպանության ոպերատիվ շարքային և վարչատնտեսական կազմին պատկանող անձանց։ ուղղիչ աշխատավորական հիմնարկությունների ոպերատիվ – շարքային և վարչատնտեսական կազմին պատկանող անձանց։

ը) պատերազմի ու աշխատանքի այն հաշմանդամներին, վորոնք պատկանում են հաշմանդամության առաջին, յերկրորդ և յերրորդ խմբերին։

թ) գյուղական ակտիվիստների այն ընտանիքներին, վորոնք տուժել են կուլակային վրեժխնդրությունից, պայքարելով գյուղի սոցիալիստական վերակառուցման և հանրային գույքի պաշտպանության համար։

ժ) պետական գույքը պաշտպանելու ուղղությամբ իրենց պաշտոնական պարտականությունները կատարելու ժամանակ, կամ դրանց կապակցությամբ սպանված— անտառային աշխատողների ընտանիքներին։

21. Այն կոլտնտեսականների տնտեսությունները (վոչ հանրայնացված գույքի վերաբերմամբ), ինչպես նաև մենատնտես աշխատավորների, բանվորների, ծառայողների և այլ աշխատավորների տնտեսությունները, վորոնք իրենց կազմի մեջ ունեն այս վորոշման 20 հոդվածում թված անձինք, տնտեսությունից հասանելիք ապահովագրական վճարումներից զեղչ են ստանում 50 տոկոսի չափով։

22. Այն կոլտնտեսությունները, կոլտնտեսականներն ու մենատնտեսները, վորոնք տուժել են այնպիսի տարերային աղետներից, վորոնցից ապահովագրում չի անցկացվում տվյալ վայրում, մասնակի չափով ազատվում են վճարումներից նույն վայրում կիրառվող ապահովագրության տեսակների վերաբերմամբ։ Զեղչման չափը վորոշում են շրջանային ապահովագրական հանձնաժողովները, համաձայն կրած վնասների և ըստ տնտեսության ունակության, բայց վոչ ավելի չափով, քան ապահովագրական վճարումների 90 տոկոսը։

ՀԱՏՎԱԾ V

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՄՈՒԾ ՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

23. Շենքերի, գյուղատնտեսական անասունների, ցանքերի և այլ գյուղատնտեսական գույքի ապահովագրության վճարումների մուծման վերջնական ժամկետները սահմանվում են հետևյալ կերպ՝

ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ա) Լենական և նախալենական շրջաններում առաջին ժամկետ՝ մինչև 1934 թ. հոկտեմբերի 1-ը պետք է մուծել ապահովավճարի 50 տոկոսը։

Յերկրորդ ժամկետ մինչև 1934 թ. դեկտեմբերի մեկը պետք է մուծել ապահովավճարի մնացած 50 տոկոսը.

բ) դաշտային (բամբակագործական և խաղողագործական) շրջաններում՝ առաջին ժամկետ՝ մինչև 1934 թ. հոկտեմբերի 15-ը պետք է մուծել ապահովավճարի 50 տոկոսը։ Յերկրորդ ժամկետ՝ մինչև 1934 թ. դեկտեմբերի 15-ը պետք է մուծել ապահովավճարի մնացած 50 տոկոսը։

ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻ ՅԵՎ ՄԵՆԱՏՆՏԵՍՆԵՐԻ ՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ա) Լենինականի, Արթիկի, Թալինի, Դիլիջանի, Իջևանի, Սիսիանի, Գորիսի, Ղափանի, Մարտունու, Բասարգեչարի, Քեշիշքենդի, Փաշալուի, Ստեփանավանի, Ղարաքիլիսայի, Շամշադինի, Նոր-Բայազետի, Ախտայի, Ալլահվերդու, Աղբարայի, Աբարանի, Մեղրու շրջանների, Կոտայքի, Աշտարակի, Վաղարշապատի և Վեդիի լեռնային մասի համար՝

Առաջին ժամկետ՝ 1934 թ. հոկտեմբերի մեկը պետք է մուծել ապահովավճարի 50 տոկոսը։

Յերկրորդ ժամկետ՝ մինչև 1934 թ. նոյեմբերի 15-ը պետք է մուծել ապահովավճարի մնացած 50 տոկոսը։

բ) Ղամարլուի, Ղուրդուղուլու շրջանների և Աշտարակի, Կոտայքի, Վաղարշապատի և Վեդիի դաշտային մասերի համար՝

Առաջին ժամկետ՝ մինչև 1934 թ. հոկտեմբերի 15-ը պետք է մուծել ապահովավճարի 50 տոկոսը։

Յերկրորդ ժամկետ՝ մինչև 1934 թ. դեկտեմբերի 1-ը պետք է մուծել ապահովավճարի մնացած 50 տոկոսը։

24. Այն ապահովավճարները, վորոնք չեն մուծվում այս վորոշմամբ սահմանված ժամկետներում համարվում են հետնույթ և գանձվում են հարկեր գանձելու համար վորոշված կարգով։ Հետնույթին ավելացվում է տույժը (յուրաքանչյուր ուշացած որվա համար) հետևյալ չափերով՝

ա) կոլտնտեսություններից՝ 0,1 տոկոս.

բ) կոլտնտեսականներից և մենատնտեսների տնտեսություններից՝ 0,2 տոկոս.

ՀԱՏՎԱԾ VI

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐ ԳԱՆՁՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՅԵՎ ԲՈՂՈՔՆԵՐ ՏԱԼՈՒ ՅԵՎ ՔՆՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

25· Կոպարային ապահովագրության որյեկտների հաշվառման, ապահովագրական վճարումներ հաշվելու, ապահովագրական ծանուցագրերը լրացնելու և հանձնելու և ապահովագրական վճարումների գանձումը ժամանակին և ճիշտ կատարելու պատասխանատվությունը դրվում է շրջանային գործադիր կոմիտեների և քաղաքային ու գյուղական խորհուրդների վրա:

26· Ապահովագրական մարմինները պարտավոր են միջոցներ ձեռք առնել վորպեսզի տուժող անտեսություններին հասանելիք ապահովագրական վարձատրությունը ժամանակին ու լրիվ տրվի և կոպարային ապահովագրություն անցկացնելու ժամանակ բյուրոկրատական խեղաթյուրումներ տեղի չունենան:

27· Պարտավորեցնել քաղաքային խորհուրդներին և շրջանային գործադիր կոմիտեներին՝

ա) պարտադիր կոպարային ապահովագրության որենքը պարզաբանելու նպատակով լայն մասսայական աշխատանք տանել գյուղերում.

բ) ապահովել այս վորոշման մեջ նախատեսված արտոնությունները լրիվ և ժամանակին տալու գործը, հատուկ ուշադրություն դարձնելով այն արտոնությունների վրա, վորոնք տրվում են կոլտնտեսություններին և սկզբնական կոոպերատիվներին կենդանաբուծության զարգացման նը պաստելու ու նրա ապրանքությունը բարձրացնելու նպատակով:

28· Տեղական ֆինանսական մարմինների գլխավորները պարտավոր են սիստեմատիկորեն ստուգել ապահովագրական մարմինների, այլև շրջանային ու գյուղական ապահովագրական հանձնաժողովների աշխատանքը:

29· Գյուղխորհուրդների և գյուղական հանձնաժողովների կողմից պարտադիր կոպարային ապահովագրման գծով թույլ տրված սխալ գործողությունների դեմ, գրավոր բողոքներ տրվում են շրջանային ապահովագրական հանձնաժողովին, իսկ շրջանային ապահովագրական տեսչության և շրջանային ապահովագրական հանձնաժողովի գործողությունների դեմ՝ ՀՍԽՀ Հանրապետական ապահովագրական վարչության:

30· Յուրաքանչյուր բողոք պետք է քննության առնվի և լուծվի վոչ ուշ, քան ստացված պահից 10 որվա ընթացքում: Շրջանային ապահովագրական հանձնաժողովների նախագահները և Պետական վարչության պետն անձնական պատասխանատվություն են կրում ներկայացրած բողոքները ժամանակին և ճիշտ քննելու համար:

ՀԱՏՎԱԾ VII

ՄԱՍՀԱՆՈՒՄՆԵՐ ՀՐԴԵՀԻ, ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ ՅԵՎ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ԱՆԿՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ՅԵՎ ԿԱՆԽԵԼՈՒ ՁԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

31· Ապահովագրական վճարումների գանձված ընդհանուր գումարի 15 տոկոսը հատկացվում է հրդեհի, հեղեղումների և անասունների անկումը կանխելու ու դրանց դեմ պայքարելու հետ կապված ծախսերի համար:

Այդ մասհանումները պետք է ծախսվեն՝

ա) Անասնաբուժարանների, ամբուլ

դ) դեպի ջրի աղբյուրները տանող լատորիաների և իզոլյատորների, նը մանապես և հրդեհային սարայների ու դեպոների կառուցման և վերանորոգման:

բ) հրաշխմացկուն չինարարության ձեռնարկումների.

գ) հեղեղումներից պաշտպանող չինություններ կառուցելու. ճանապարհներ, ինչպես նաև արտեղյան և այլ ջրհորներ կառուցելու.

յե) հրշեջ սարքավորում, ինվենտար և սարք ձեռք բերելու.

զ) բնապբեպարատներ, դեղորայք, գործիքներ, անասնաբուժական-սանիտարական մարդկանց համար սարքավորում ձեռք բերելու.

է) հրշեջ, հրաշխմացկուն չինարարության և անասնաբուժական-սանիտարական ստորին ցանցում աշխատողների համար կազմակերպված դասընթացները վարկավորելու.

թ) հակահրդեհային, անասնաբուժական և սանիտարական ձեռնարկումների մասսայականացման համար:

Շրջանային գործադիր կոմիտեները, քաղաքային խորհուրդները ու պետական որգանները 15 տոկոսային մասհանման հաշվին ձեռարկումների պլաններ կազմելիս պարտավոր են հաշվի առնել վերոհիշյալ ձեռնարկումների անցկացման անհրաժեշտությունն առաջին հերթին այն գյուղերում և կոլտնտեսություններում, վորոնք ակտիվ պայքար են մղում հրդեհների, համաճարակների ու այլ տարերային աղետների դեմ:

32· Սահմանել ապահովագրական վճարումների գանձված գումարներից 3/4 տոկոսային մասհանում պարտադիր ապահովագրության գծով մասսայական աշխատանք կատարելու, գյուղխորհուրդներին կից ապահովագրական ակտիվին, և առաջին հերթին ակտիվիստ-կոլտնտեսականներին պարգևատրելու համար:

Ֆոնդի ստեղծման և ծախսման կարգը սահմանվում է ԽՍՀՄ Ֆինժողկոմատի կողմից հրապարակված հրահանգով:

ՀԱՏՎԱԾ VIII

ԿՈՊԱՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

33· Կոպարային ապահովագրություն անց է կացվում այս վորոշման, ԽՍՀՄ Ժողկոմխորհի կողմից 1933 թ. մայիսի 28-ին հաստատված պարտադիր կոպարային ապահովագրության կանոնների (ԽՍՀՄ Որ. Ժողով. 1933 թ. № 34 հոդ. 201 բ.): Այս որենքից բղխող փոփոխումներով և ի զարգացումն այս վորոշման և հիշյալ կանոնների ԽՍՀՄ Ֆինժողկոմատի կողմից հրապարակված հրահանգների հիման վրա:

ՀՍԽՀ Ժողովրդական Կոմիսարների խորհրդի նախագահի
տեղակալ՝ Ա. ՅԵՐԶՆԿՅԱՆ

ՀՍԽՀ Ժողովրդական Կոմիսարների խորհրդի գործերի կառավարչի տեղակալ՝ Գ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

Երևան, 1934 թ., ոգոստոսի 2·

ՀՍԽՀ ԳԱ Գրադարան
Գոս. Ազգ. Գրադարան
ՀՍԽՀ ԳԱ
Մ. Ա. Մասիսյան
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0213844

43.871

Գեոհրատի Տպարան Յերեվան

Գլավլիտ 179 Պատվեր 1236 Տիրաժ 2000